



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

Ս. Մ. ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱՅԻ ՄԱՀՎԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ¹⁾

1701 թվի օգոստոս ամսին, Կ. Պոլսում, յատին Գաբուչիներն Վանքում, որտեղ հյուրընկալվել էր Մխիթարը իր 9 աշակերտներով, հիմնադրվեց Մխիթարյան Միաբանությունը, որը նպատակ էր դնում, ինչպես հավատացնում են Մխիթարյան հայրերը, «լուսավորություն տարածել» հայ ժողովրդի մեջ կաթոլիկ եկեղեցու խողովակով: Նորակազմ միաբանությունը որգեպրում էր լատին միաբանությունների հարևան և նման կանոնադրությունը:

Մխիթարը և իր առաջին աշակերտները, մինչև իրենց վերջնական հաստատվելը Վենետիկի Ս. Ղազարի վանքում՝ 1717 թիվը, թափառեցին Պոլսից՝ Մորեա կղզին և այնտեղից՝ Ադրիականի ոստանը: Մի քանի անգամ այս վայրերում բնակություն հաստատելուց, քաղաքական և պատերազմական ստիպումների տակ ցրվելուց հետո, ի վերջո, Վենետիկ քաղաքի ազնվական առևտրական ծերակույտը, գնահատելով հոռմեական դավանանքի հարող և Մերձավոր Արևելքի շուկա կազմող շահաբեր երկրներում կաթոլիկ պրոպագանդայում ակտիվ տարր կազմելու կոչված հայկական այս խմբի ապագա դերը, նրանց շնորհեց Ս. Ղազարի բորոտների կղզին, իբրև մշտնջենական քանակավայր:

Շատ է գրված ու հեղհեղված Մխիթարի դեմ հարուցված խոչընդոտների մասին: Մխիթարի առջև դժվարություններ և խոչընդոտներ, իրոք, եղել են, սակայն արդարացի լինելու

համար պիտի ասենք, որ նրանք զգալի շահով շահագանցված են կաթոլիկ պատմաբանների կողմից: Չափազանցքել են, օրինակ, նրա սկզբնական շրջանի դժվարությունների բնույթը: Սեբաստիայի Ս. Նշան վանքից մինչև Կարին, էջմիածին, Սևան և Կիպրոս իր թափառումների ընթացքում շատ անգամ առողջական, կլիմայական ու տրնտեսական վատ պայմաններից իր կրած զրկանքներն ու տառապանքները, նրա հետևորդները վերագրում են որպես Հայ Եկեղեցու կողմից կազմակերպված մի հալածանքի՝ ազգի «նոր լուսավորչի» դեմ, «նրա փրկարար գործը» որպես թե խափանելու ինչ որ «դիվային ծրագրով»:

Անհեթեթ բան կլիներ խորհել՝ թե 15—16 տարեկան մի սկսնակ պատանու դեռ շճեռարկած, և ոչ իսկ ծրագրված գործի դեմ մի ամբողջ համայնք, կամ խմբակ, կամ նույնիսկ մի անհատ, որոշած լինեք գիտակից հակառակորդի դիրք բռնել: Պատմությունն այս գույնի տակ ներկայացնող պատմաբանների հետին մտքերը որոշ են, և կարիք չկա այս կետի վրա ճշտումներ կատարել:

Անշուշտ, Մխիթարը ունեցավ իր հակառակորդները. գտնվել են և նրա հիմնած գործը բանդելու տրամադրված մարդիկ, բայց այդ տեղի է ունեցել ավելի ուշ, երբ նա արդեն հեռացել էր Հայաստանից և հայկական միջավայրից ու հաստատվել օտար հողի վրա, կաթոլիկ շրջապատի մեջ:

Պոլսում, Մխիթարի գործունեությունն ավելի դավանական էր, քան ուսումնական: Օգտվելով Հայ Եկեղեցու լայնախոհ ոգուց, Մխիթարը նույն այդ եկեղեցու բեմից «համարձակ» կաթոլիկություն էր քարոզում և վարկաբեկում Ազգային Եկեղեցու դավանանքը: Եվ այս՝ այնպիսի մի ժամանակ, երբ Բյուզնդիայի մայրաքաղաքում հոռմեաբանական

1) Սփյուռքի հայկական գաղութներում նշվում է Մխիթար Աբբայի 200-ամյա հոբելյանը: Մամուլում գրվել են բազմաթիվ հոդվածներ Աբբայի և նրա հիմնած միաբանության գործունեության մասին: Ընթերցողներին ճիշտ կողմնորոշում տալու համար, «էջմիածին» ամսագրի խմբագրությունը ներկա հոդվածով ցանկանում է անդրադառնալ այդ հոբելյանին: ԽՄԲ.

ների և հայ առաքելականների միջև պայքարը ծայր աստիճանի էր հասել: Եստ քնական էր, և հարկ չկա զարմանալու, և ոչ էլ Մխիթարի կենսագրի համան կեղծելու, տր փոխադարձ տեղացող հարմաներից Մխիթարն էլ իր բաժինն ստանար: Ծիշտ է, Եփրեմ և Ավետիք պատրիարքները որոշ խնամությունների դիմել են Հայ Եկեղեցու ինքնապաշտպանության համար իրենց մղած պայքարի մեջ, բայց մենք չենք կարող մեղադրել նրանց, որովհետև Հայ Եկեղեցու պետերը, տվյալ դեպքում Կ. Պոլսի պատրիարքները, պարտավոր էին պաշտպանել Հայ Եկեղեցին օտար դավաճանների ոտնձգությունների դեմ, ու մեղադրելի պիտի լինեին՝ եթե արած չլինեին այդ Դարեր շարունակ Հայ Եկեղեցին ոգի ի բոլոր պաշտպանել է իրեն նախ Բյուզանդական Քաղկեդոնականության, և հետո՝ Եվրոպայի պապականության ազդեցությունների դեմ, որոնց պառակտիչ, և, ի վերջո, կանոնող նպատակները հայտնի են: Գաղտնիք չէ այլևս, որ 18-րդ դարի սկզբում, Եվրոպական որոշ երկրների փորձում էին կրկնել քաղաքական ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքում և այդ նպատակի համար գործակալներ էին գտել հանձին կաթոլիկ միսիոնարների: Կաթոլիկական ամեն պրոպագանդա, պարզ է, որ վտանգում էր նախ՝ Հայոց Եկեղեցու ինքնօրինությունը և հետո՝ հայ ժողովրդի ապահովությունը, և Մխիթարը, ինչ խոսք, այդ պրոպագանդայի գործին էր նվիրված: Միքայել Նալբանդյանը, խոսելով Մխիթարյանների մասին, իրավացիորեն, նրանց համարում է «Պապականության մշակներ կամ լավ ևս ասել՝ արծաթագին ստրուկներ» (Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 2-րդ, Երևան, 1947 թ., էջ 192):

Հեռանալով Հայ Եկեղեցուց և հայ աշխարհից, Մխիթարն իր միաբանությունը հաստատեց օտար հողի վրա, Կաթոլիկ երկրում՝ «Երեսնամյա կատարելու համար իր ճշտավորության դերը» հայ ժողովրդի մեջ: Ուրիշները թեև, նույն այդ դարում, նույնքան դժնդակ պայմանների մեջ, իրենց լուսավորության գործը հաստատել էին հայրենի հողի վրա՝ անմիջականորեն կապված հայ ժողովրդին՝ էմիգրանտի, Սյունիքի, Բաղըշի, նոր Զուլալի և այլ վայրերի մեջ: Վենետիկը, անշուշտ, քաղաքականորեն, ավելի ապահով վայր էր, քան Թուրքիան կամ Պարսկաստանը: Հանգիստ պայմաններում, Մխիթարյան Միաբանության անդամներից ոմանք կարողացան արդյունավոր գործ կատարել: Ավգերյանն իր «Հայկազյան բառգրքով», Չամչյանն իր «Նահատոր «Հայոց պատմությունով», Ինճիճյանն իր «Հնարգուսությունով», Ալիշանն իր

«Միսականով», «Այրատատով», «Միսվանով» և այլն, խոշոր ներդրումներ կատարեցին Հայ ազգայնության մեջ: Մանգրն չպետք է մոռանալ նաև, որ Մխիթարյանների երկապիտոթյունները իրենց ժամանակի կաթոլիկ հասուն ոգով են կատարված, հայոց դարերի պատմությունը դիտված է ոչ-գիտական, հաճախ սխալ ու թյուր տեսանկյունից և դավանական ոգին ու մոլեռանդությունը շատ անգամ կամովին խեղաթյուրել են պատմական տվյալները և փաստերը: Մխիթարյանների մատենագրական գործունեությունը, ինչպես ճիշտ նշել է Մ. Նալբանդյանը, ուներ երկու շարժառիթ — մի կողմից հաճոյանալ ազգին, մյուս կողմից հաճոյանալ պապին: «Եվ այդ շարժառիթը — գրում է Նալբանդյանը — անմիջապես հետևանք էր Մխիթարյանց ճիզվիտությունը» (նույնը, էջ 231):

Հմուտ լինելով հին և նոր Եվրոպական օտար լեզուների, Մխիթարյանները, դասական և միջնադարյան բնութագրական հեղինակների գործերը թարգմանելով, ճոխացրին հայ գրականությունը. այդ տեսակետով մի թոմարձան կամ մի Բասթրատունի և ուրիշների անստարակելի արժանիքներ ունեն:

Մխիթարյանները որոշ ծառայություն մատուցին նաև հայկական ձեռագրերի հավաքման և կորստից փրկելու ուղղությամբ: Տպագրական գործն էլ, հակառակ որ դրանք առաջինը և միակը չեղան, նրանք հետևողական կերպով տարագրեցին և գրեցին ու հանդեսներով կամ նույնավոր հրատարակությունն ապահովեցին:

Կրթական գործի մեջ նույնպես Մխիթարյանները մասնավոր աշխատանք կատարեցին՝ օգտագործելով հնդկահայ Մուրադյանի և Ղարամանյանի կուսակները՝ Վենետիկում և Փարիզում հիմնելով կրթական հաստատություններ:

Հակառակ այս բոլորի, Մխիթարյանները գրական, փիտական և ուսումնական գործունեությունը իր ժամանակի, այսինքն՝ 19-րդ դարի պայմանների մեջ սահմանափակելով միայն կարելի է գնահատել: Համաձայն չենք Մխիթարյանների հետ, որոնք հայ ժողովրդի կուստուրական վերելքը նոր շրջանում վերագրում են Մխիթարյանների արժանիքներին: Տալով հանդերձ անկողմնավորությամբ «գլխաթեր կայանք», գտնում ենք, որ այս վերելքի 18-րդ և 19-րդ դարերում անգամ, հայ ժողովրդի գրական և ուսումնական վերելքի մեջ գլխավոր վատասկը պատկանում է ոչ թե Մխիթարյաններին, այլ Արևելյան և Արևմտյան Հայաստանների գլխավոր կենտրոններին, ուր վերածնության գործը առաջ տարվեց ավելի ակտիվ և պրակտիկ կերպով: Հայաբնակ քաղաքներում

հաստատված մի քանի Մխիթարյան անկարևոր վարժարանները չէին, որ բաց արեցին լուսավորության ճանապարհը հայ ժողովրդի առաջ: Հայերեն աշխարհարար լեզուն՝ ժողովրդի մեջ ուսում տարածելու միակ խողովակը, զարգացավ թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հայոց մեջ, անկախաբար Մխիթարյաններից և Կհնճովա նրանց: Հայ ժողովրդի երկու գլխավոր զանգվածների հասարակական միտքը, նոր կուրսության զարգացավ Մխիթարյանների ներգործությունից դուրս: Քանի դարը առաջացավ մտավոր կյանքը զարգացավ ու բարդացավ, այնքան էլ Մխիթարյանների դերն ու ազդեցությունը նվազեց. դա նշան է, որ այդ գործն էլ արդեն իր էվոլյուցիան կատարել ու լրացրել է: Իսկ այսօր, 20-րդ դարի իրականության առաջ, հայ ժողովրդի և հայ հայրենիքի պատմական ու քաղաքական իրադրության մեջ, Մխիթարյանների դերը իսպառ փակված է: Ճիշտ է, Սփյուռքի մի քանի վայրերում դեռ նրանք ձիգ են թափում պահելու իրենց դիրքերը, բայց ոչ պատվաբեր գնով:

Ի սպաս դնելով իրենց բովանդակ ուժն ու միջոցները Հոռոմի եկեղեցու նպատակներին, հայտնի է, որ Մխիթարյան Միաբանությունը (Վենետիկ և Վիեննա) չի կարող այսուհետև հայության լուսավորման հավակնություններ անուցանել: Հոռոմի եկեղեցին, արբանյակ դարձած պատերազմի հրձիգներին, անհաշտ կռիվ է հայտարարել ժողովուրդների ազատագրության, ամեն կարգի տնտեսական, քաղաքական ու հոգեկան բնութագրերից ձերբազատման պայքարը ղեկավարող ուժի՝ Մովսեսական հզոր ու բարգավաճ Միություն դեմ, որի մեջ էլ գտել հայ ժողովուրդը վերջնականապես իր հայրենիքի ապագա երջանկությունն ու բախտը: Իսկ երբ Մխիթարյանները, հռոմեադավան հայերի պետի՝ Աղաջանյան պատրիարքի հրամանի տակ, մտել են կրպի դաշտ ընդդեմ Մովսեսական հայ հայրենիքի, ապա ուրեմն ո՞ր մեկ Հայաստանի և ո՞ր մեկ հայ ժողովրդի «լուսավորության» անունով նրանք կարող են խոսել այժմ:

Ժամանակին Մխիթարյանների մեջ եղել են հայրենասեր մարդիկ: Նրանց շարքումն է գտնվել Մեծ Ալիշանը, որի ամեն մի սողի մեջ հայրենասիրական շունչ կա և որին երախտագիտակա՞ն հարգանքով է հիշում հայ ժողովուրդը: Մխիթարյանները թող ցույց

տան այժմ իրենց շարքում մեկը, որի գործի մեջ, թեկուզ խոշորացույցով, հնարավոր լինի տեսնել հայրենասիրության ամենափոքրիկ հատիկը: Թող ցույց տան իրենց գրական մի գործը, ամապրերից մեկի մեջ տեղավորված մի հոգաված, որի մեջ լինի խանդավառության աննշան արտահայտություն Մովսեսական ծաղկած Հայրենիքի, նրա հերոս ժողովրդի մասին, որով օտարներն են անգամ պարծենում: Ոչինչ ցույց տալ նրանք չեն կարող:

Իսկ դրան հակառակ, հայ կաթողիկե եկեղեցին ստրկական ծառայության մեջ մտած, անում է հնարավորը, Սփյուռքի հայկական շրջանների ուշադրությունը թեքելու դեպի Արևմուտք, դեպի Հոռոմ: Աղաջանյանների բերանով նրանք խաչակրաց արշավանք են քարոզում Մայր Հայրենիքի դեմ: Նրանք պարծենում են թուրք ատկյարով, այն ակյարով, որի թափած հայկական ավերի քան մեկ միլիոն անմեղ գոհերի արյունը դեռ չի շորացել: Կարդինալ Աղաջանյանի պաշտոնավթիթը, հայ մարդու ազգային արժանապատվությունը ցեխի մեջ տրորելով, ահա թե ի՞նչ է գրում. «Միջազգային տեսակետով, թուրքի պես կարգապահ, պատերազմիկ, առանց հիմնաբերող գորսայունի, առանց պառակտումի և ճնշվածքի պետության մը դիրքը Ամերիկայի կողքին, միջերկրական ժողովուրդներու ապահովության զգացումը կավելցնե. Միացյալ Նահանգները գիտեն քե բուրժ գեկաբիս ձեռք արված գեներ պիտի ծառայե իր նպատակին, քե բուրժ բանակը պիտի ծառայե իր նպատակին, քե բուրժ բանակը պիտի փալե և իբրև մեկ մարդ պիտի կովի: Մերձավոր Արևելքը քոց դրան մը ետև կգտնվի, որոնք առջև արթուն կհակ թուրք պահակը»: («Մասիս», 7 ապրիլի 1948 թ.): Կոմենտարիսները կարծում ենք ավելորդ են:

Մրանք փաստեր են, որոնք պարտավորեցնում են Սփյուռքի հայկական շրջաններին աչալուրդ լինել դեպի կաթողիկե պրոպագանդան, որի սրբությունը գտնվում է ո՞չ թե Մայր Հայրենիքում, այլ օտարի մոտ, ո՞չ թե Մայր Աթոռում, այլ Հոռոմում:

Այս նկատառումով էլ, անհրաժեշտ է չափազանցությունների մեջ չընկնել Մխիթար Աբադի և նրա հիմնած միաբանության մասին խոսելիս, մանավանդ երբ խոսքը ներկա Մխիթարյաններին է վերաբերում: